

ԲԱՐԵԿԱՄ

Ով որ իր բարեկամին թերութիւնը չի յայտնեւր ու խրատական խօսքերով չի յանդիմանեւր բարեկամը չվշտացնելու կամ չխոտոնեցնելու համար՝ նշմարիտ բարեկամ չէ, այլ հակառակը՝ թշնամի, որովհետեւ թշնամութեան գործ է, կարողութիւն ունենալով հանդերձ, բարեկամի սխալը չուղղել, որուն պատճառով սխալին կը հետեւի նաեւ այլ մեծամեծ վնասներ. բայց եթէ խրատէ, սակայն ան չանսայ, թող բարեկամներէն մէկու մը հետ միասին խրատէ, իսկ եթէ անոնց ալ չանսայ, թող ըսէ եկեղեցւոյ առաջնորդին, որպէսզի պարտաւորութենէն ազատի: Իսկ եթէ առաջնորդին ալ չըսէ, թող իրրեւ հեթանոս ու մաքսաւոր ըլլայ: Բացայայտ յանդիմանութիւնը անլի լաւ է՝ կեղծաւոր բարեկամութենէն (Առակ 27:5)

Հաւատարիմ բարեկամն ամուր աշտարակ է. գայն գտնողը գանձ կը գտնէ: (Սիրաբ 6:14)

ԱՌԱԿՆԵՐ

Իմաստութիւնը ցանապարհներուն սկիզբը կը փառաբանուի եւ հրապարակներուն վրայ բարձրաձայն կը հռչակուի. պարիսպներուն բարձունքէն կը փարոզուի, ամրոցներուն դռներուն կը յայտարարուի եւ փառաբանուի դարպասներուն համարձակօրէն կը խօսուի:

(Առակաց 1.20-21)

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՈԳԻՆԵՐԸ, ԳԵԻԵՐԸ, ՉԱՐ ՈՒԺԵՐԸ՝ ՀՈԳԵՒՈՐ ԳԻՏԱՆԿԻՒՆԷՆ

ԱՏԱՄՆԱՑԱԻ ՀՄԱՅՈՒՄ

Ուրիշ նամակի մը մէջ կը գրեն. «Տասնհինգ ամսու գաւկիս «Անգլիական հիւանդութիւն» կը սպառնար: Ինծի խորհուրդ տուին դիմել բուժակի մը, որ շատերը բժշկած էր: «Բուժումը» կատարուեցաւ լուսնին նուազումին ժամանակ, Ուրբաթ օր մը: Երեխային մազերն ու եղունգները կտրեցին, թուղթով փաթեցին, խաչ հանեցին եւ տեղ մը դրին: Յետոյ անհասկնալի խօսքեր շնչացին. միայն կը լսէի, որ Աստուծոյ անունը կու տային»:

«Չորս տարեկան գաւկիս ստիպեցի որ հմայողին քով երթայ: Կարմիր քամի» հիւանդութեամբ կը տառապէր: Ամէն ինչ կը կատարուէր շատ պարզ: Լիալուսնի ժամանակ պէտք էր ձեռքս հիւանդ մասին վրայ տանէի ու բերէի»:

Իսկ ի՞նչ էր արդիւնքը: Այդ մասին կ'իմանանք շարունակութենէն. «Տղաս այնպէս դիւտեցաւ, որ գիշերը չէինք կրնար գինք առանձին ձգել: Յաճախ յարձակումներու կ'ենթարկուէր, եւ այդ պատճառով ալ լրիւ հիւժեր էր: Վախը կը համակէր գինք եւ մէկ ձայնի վրայ կը պոռար, մարդոց մէջ փրկութիւն կը փնտռէր:» ...

Շարունակելի



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ԲՈՒ ԽՕՍԵԴ ԽՄ ՈՏԲԵՌՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՕ ՃԱԻԴԱՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ա., 119-105)

Ե. ՏԱՐԻ

ԿՐՈՒԿԻ՝ 22 ԱՊՐԻԼ, 2012

ԹԻԻ 17

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ 2.23 -3.12

ԱՇԽԱՐՀԱՄԱՏՐԱՆ (ԿԱՆԱԶ ԿԻՐԱԿԻ)

Ձատիկի տօնին, մինչ Յիսուս Երուսաղէմ կը գտնուէր, շատեր հաւատացին իրեն, երբ տեսան անոր գործած հրաշքները: Սակայն Յիսուս ինքզինք չէր վստահեր անոնց, որովհետեւ բոլորն ալ կը ճանչնար եւ պէտք չունէր ոեւէ մէկուն մասին ուրիշին վկայութեան, քանի ինք գիտէր թէ ի՞նչ կայ այդ մարդուն սիրտին մէջ:

Նիկողէմոս անունով փարիսեցի մարդ մը կար, հրեայ իշխան մը, որ գիշերով Յիսուսի մօտ եկաւ եւ ըսաւ անոր. «Վարդապետ, գիտենք որ դուն Աստուծոյ կողմէ զրկուած ուսուցիչ մըն ես, որովհետեւ ո՛չ ոք կրնայ գործել քու կատարած հրաշքներդ, եթէ Աստուած անոր հետ չըլլայ»:

Յիսուս պատասխանեց անոր. «Հաստատ գիտցիր, որ եթէ մէկը վերստին չծնի՝ չի կրնար տեսնել Աստուծոյ արքայութիւնը»:

Նիկողէմոս հարցուց անոր. «Մեր մարդ մը ինչպէ՞ս կրնայ նորէն ծնիլ: Կարելի՞ քան է, որ ան կրկին մտնէ իր մօր որովայնը եւ ծնի»:

Յիսուս պատասխանեց. «Վստահ եղի՛ր, որ եթէ մէկը ջուրէն եւ Հոգիէն չծնի՝ չի կրնար երկինքի արքայութիւնը մտնել, որովհետեւ մարմինէն ծնածը մարմին է, իսկ Հոգիէն ծնածը՝ հոգի: Դուն մի՛ գարմանար, որ քեզի ըսի՝ թէ պէտք է կրկին ծնիք: Հովը ուր որ ուզէ կը փչէ. դուն անոր ձայնը կը լսես, բայց չես գիտեր թէ ուրկէ կու գայ եւ ուր կ'երթայ: Նոյնպէս են բոլոր անոնք, որոնք Հոգիէն կը ծնին»:

Նիկողէմոս հարցուց. «Ինչպէ՞ս կը պատահի ատիկա»:

Յիսուս պատասխանեց. «Դուն որ Իսրայէլի ժողովուրդին վրայ ուսուցիչ կարգուած ես, ատիկա չե՞ս գիտեր: Վստահ եղի՛ր, թէ ինչ որ գիտենք՝ կը խօսինք եւ ինչ որ տեսանք՝ անոր մասին կը վկայենք, բայց մեր վկայութիւնը չէք ընդունիր: Եթէ երկրաւոր բաներու մասին խօսեցայ ձեզի եւ չհաւատացիք, ինչպէ՞ս պիտի հաւատաք ինծի եթէ երկնաւոր բաներու մասին խօսիմ»:

ԱՇԽԱՐՀԱՍՏՐԱՆ ԿԱՄ ԿԱՆԱԶ ԿԻՐԱԿԻ

Աշխարհամատուռ կը նշանակէ երեւելի մատուռ կամ եկեղեցի: Բառը կազմուած է աշխարհ եւ մատուռ բառերէն: Աշխարհամատուռ, նաեւ կը նշանակէ աշխարհի առաջին մատուռը: Զատկուան տօնին յաջորդող երկրորդ Կիրակին եկեղեցական տօներու շարքին, կը յիշատակուի նաեւ Աշխարհամատուռ կամ Կանաչ Կիրակի տօնը: Աշխարհամատուռը, մեզի կը յիշեցնէ Քրիստոնէութեան առաջին մատուռը, որ հիմնուեցաւ վերնատան կից, առաքեալներու կողմէ:

Առաքեալները, Յիսուսի կարգադրութեան համաձայն, իր համբարձումէն յետոյ, կը հաւաքուէին վերնատուն՝ Սիոնի բարձունքին, կը յիշէին իրենց վարդապետը եւ կը կատարէին վերջին ընթրիքի ժամանակ Անոր տուած պատգամը: Կ'օրհնէին հացն ու գինին, միասին կ'աղօթէին եւ միասնաբար կը ձաշէին: Հաւաքական կեանք կ'ապրէին: Աշակերտներուն հաւաքոյթներու առաջին աղօթաժամը կոչուեցաւ աշխարհի առաջին եկեղեցին՝ Աշխարհամատուռ, եւ անոր յիշատակին եկեղեցւոյ մէջ նշանակուեցաւ տօնական օր մը:

Աշխարհամատուռն տօնը կրօնական եւ եկեղեցական տեսակէտէն մեծ նշանակութիւն կը ներկայացնէ: Ան Քրիստոսի հաստատած իտէյալ եկեղեցին էր, եւ այս օրերու քրիստոնէայ աշխարհի, մանաւանդ եկեղեցւոյ կրօնապետներու երազած իտէյալ եկեղեցին է, ուր բոլոր քրիստոնէաները կրնան միասնաբար աղօթել, հաղորդուիլ եւ գործել:

Աշխարհամատուռն Կիրակին կը կոչուի նաեւ Կանաչ Կիրակի: Կանաչ կոչումը ճշգրիտ իմաստը դժբախտաբար ծանօթ չէ մեզի: Ոմանք այլաբանական իմաստ կը տեսնեն, որպէս նմանութիւն բնութեան եւ առաջին եկեղեցւոյ միջեւ: Կանաչ Կիրակին կը նմանցնեն բնութեան մէջ ծաղկող, ծլարձակող եւ աճող կեանքին, որ կենդանութիւն ու թարմութիւն կու տայ աշխարհին եւ մարդկութեան: Աշխարհամատուռն ալ որպէս Քրիստոսի ցանած սերմի առաջին կանաչ ծիլը, աճեցաւ, ծլարձակեց, բազմացաւ եւ դարձաւ աշխարհին վրայ տարածուած եկեղեցին:

Ի՞նչ է խումկին եւ խնկարկութեան նշանակութիւնը:

Աստուծոյ խումկ մատուցելը նշանակ է սրտի խորերէն վեր բարձրացող ջերմեղանդ աղօթքի, որ հանելի է Աստուծոյ առջեւ ու նաեւ յարգանքի եւ օրհնութեան արտայայտութիւնն է մարդուն իր Արարիչին հանդէպ:

Ժողովուրդին խնկարկելը կը նշանակէ Աստուծոյ շնորհաց բաշխումին, գոր կը կատարէ պատարագիչ քահանան թափօրի ատեն իր օրհնութեան աղօթքներով միատեղ: Պատարագի ընթացքին ալ երբ պատարագիչը մէջ ընդ մէջ օրհնութիւն կը բաշխէ, սարկաւազը որպէս Ս. Սեղանի սպասուոր եւ օգնական քահանայի, անոր հետ կը դառնայ դէպի ժողովուրդը եւ կը խնկարկէ:

Սարկաւազին կողմէ քահանային կատարուած խնկարկութիւնը յարգանքի արտայայտութիւն է Աստուծոյ ծառային՝ դեսպանին հանդէպ:

ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԾԻՍԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ
Յարգելի ընթերցող՝ ձրագ կիրակնօրեայ շաբաթաթերթի. սոյն սիւնակին ընդմէջէն մենք ամէն շաբաթ բացատրութիւն պիտի փոխանցենք մեր եկեղեցւոյ ծիսական արարողութեան ընթացքին գործածուող առարկաներու մասին, անոնց իմաստին եւ գործածութեան նշանակութեան: Այն բոլոր առարկաները, որոնք կը տեսնենք եկեղեցւոյ մէջ՝ իմաստ ունին: Հետեւաբար մենք այբուբենի շարքով պիտի փոխանցենք ամէն շաբաթ առարկայի մը բացատրութիւնը:

ԱՂԱԽՆԻ ԿԱՎ ԱՂԱԽՆԱԿԵՐՊ ՏՈՒՓ

Միւռոնը եկեղեցւոյ մէջ Հոգւոյն Սրբոյ շնորհաց նշանակն է, եւ Ս. Հոգին Քրիստոսի Մկրտութեան ատեն աղանիի կերպարանքով յայտնուած ըլլալուն՝ սովորութիւն եղաւ որ միւռոնը հանդիսաւոր արարողութեանց ատեն աղանաձեւ շինուած անօթնեւոր մէջ դրուի: Միւռոնի աղանիները թեւատարած աղանիի ձեւը կը կրեն, որուն փորը միւռոն դնելու տեղն է, եւ կը լեցուի թիկունքի վրայ յարմարեցուած ծակէ մը եւ կը թափի բերնէն՝ որուն ներքին կտուցը շարժական է, ծռած ատեն կը բացուի եւ շտկուած ատեն կը փակուի: Աղանին ալ հաստատուած է բունի մը վրայ եւ անկէ կը բռնուի, եւ անոր ներքեւը յայն պատուանդան մըն ալ պիտի ունենայ, տեղ մը դնելու եւ հանգչեցնելու համար:

ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ

ՄԻԱՄՆԱԲԱՐ ԱՂՕԹԵՆՔ

ՄՍԵՒ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԻՆ ԽՆԴԻԵԼՈՒ ԱՂՕԹԸ

Շնորհակալութիւնս քեզի, ո՛վ Աստուած՝ մեր տէրը, որ քու տեսանելի լոյսովդ ուրախացուցիր մեզ՝ քու բոլոր արարածներդ, իսկ քու պատուիրաններուդ հոգեւոր լոյսովը լուսաւորեցիր քեզի հաւատացողները: Մե՛զ ալ գորացու՛ր, Տէ՛ր, որպէսզի կարենանք քու պատուիրաններդ պահել այսօր եւ ամէն ատեն, որպէսզի լուսաւորուած միտքով՝ միշտ քու կամօք կատարենք եւ քու պատրաստած բարիքներուդ հասնինք բոլոր սուրբերուդ հետ միասին, մեր Տիրոջ եւ Փրկչին՝ Յիսուս Քրիստոսի պարգեւած շնորհովն ու մարդասիրութեամբը: Անո՛ր կը վայելեն փառքը, իշխանութիւնն ու պատիւը, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Դո՛ւն ես մեր խաղաղութիւնն ու կեանքը, ո՛վ Միածին Որդի Աստուծոյ, մեր Տէրն ու փրկիչը՝ Յիսուս Քրիստոս: Տո՛ւր մեզի քու խաղաղութիւնդ, որ սուրբ առաքեալներուդ շնորհեցիր՝ անոնց վրայ փչելով կենդանացնող եւ ամենագոր քու Սուրբ Հոգիդ: Որպէսզի մե՛նք ալ աշխարհէն եկող ամէն տեսակի փորձութիւններէն խաղաղած՝ տաքար եւ բնակարան դառնանք աստուածային շնորհներուդ, եւ շնորհակալութեամբ փառաւորենք քեզ՝ ո՛վ Քրիստոս, մեր Աստուածը, Հօրը եւ Սուրբ Հոգիիդ հետ միասին. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն

ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒ ԳՈՐԾԵՐԸ

9.23-31

Ժամանակ մը վերջ, Դամասկոսի հրեաները որոշեցին Սողոսը սպաննել: Սակայն Սողոս իմացաւ անոնց նենգութիւնը, թէ՛ գիշեր ցերեկ կը հսկէին քաղաքին դռներուն առջեւ, որպէսզի գինք սպաննեն: Ուստի հաւատացեալները գինք գիշեր մը գամբիւղի մը մէջ դնելով պարիսպէն վար իջեցուցին:

Սողոս Երուսաղէմ եկաւ եւ կը ջանար հաւատացեալներուն հետ շփման մէջ մտնել. բայց բոլորն ալ կը վախնային իրմէ, չհաւատալով թէ Քրիստոսի աշակերտ դարձած է: Սակայն Բառնաբաս առաւ Սողոսը, առաքեալներուն տարաւ եւ անոնց պատմեց, թէ ի՞նչպէս Սողոս ճամբուն վրայ Տէրը տեսած եւ անոր հետ խօսած է, եւ թէ ի՞նչպէս Յիսուսի անունով համարձակօրէն քարոզած է Դամասկոսի մէջ: Անկէ ետք Սողոս առաքեալներուն հետ կը մնար ու կը շրջէր Երուսաղէմի մէջ, եւ համարձակօրէն կը քարոզէր Տէր Յիսուսի անունով: Կը խօսէր ու կը վիճէր յատկապէս յունախօս հրեաներուն հետ, որոնք գինք սպաննելու ձեւ մը կը խորհէին: Հաւատացեալ եղբայրներ երբ իմացան, Կեսարիա փախցուցին Սողոսը, եւ հոնկէ ալ Տարսոն դրկեցին:

Եկեղեցին ամբողջ Հրէաստանի, Գալիլիայի ու Սամարիայի մէջ խաղաղութիւն կը վայելէր եւ կը զօրանար: Սուրբ Հոգիի օգնութեամբ հաւատացեալները կը բազմանային եւ Տիրոջ երկիւղով կ'ապրէին:

ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՆԱՍԱԿԸ

2.1-10

Հետեւաբար մէկդի ձգեցէ՛ք ամէն տեսակի չար մտածում ու նենգութիւն, կեղծաւորութիւն ու նախանձ եւ ամէն տեսակի չարախօսութիւն: Որպէս հաւատքի նորածին մանուկներ՝ Աստուծոյ խօսքի անխարդախ կաթին փափաքեցէ՛ք, որպէսզի անով աճիք եւ փրկութեան հասնիք: «Անգամ մը որ Տիրոջ խօսքին համը առնէ՛ք, պիտի տեսնէք թէ քաղցր է ան»: Սօտեցէ՛ք անոր, Քրիստոսի, որովհետեւ ինքն է այն կենդանի վէմը, որ թէեւ մարդոցմէ մերժուած բայց Աստուծմէ ընտրուած պատուական վէմն է: Այդպիսով դուք ալ որպէս կենդանի քարեր՝ Քրիստոսի վէմին վրայ կը կառուցուիք իրրեւ հոգեւոր տաճար-իւրաքանչիւրդ կը դառնաք անարատ քահանաներ եւ Յիսուս Քրիստոսի միջոցաւ հոգեւոր ընդունելի պատարագ կը մատուցանէք Աստուծոյ: Որովհետեւ մարգարէութեան մէջ գրուած է. «Ահա ես Սիոնի մէջ կը դնեմ ընտրուած վէմ մը, պատուական անկիւնաքար մը. անոր հաւատացողը յուսախար պիտի չըլլայ»:

ՀԱՐՈՒՆԱԿԵԼ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆԸ

ԱՍՏՈՒՄՕՄԱՀՈՒՄՆՁԷՆ: ՄԻՇՏ

ԱՍՏՈՒՄՕՄԱՀՈՒՄՆՁ ԿԱՐՂԱՆՔ: